Los Angeles վարչաշրջանի Մետրոպոլիտենի փոխադրումների իշխանություն
2019 Public Participation Plan (Հանրային մասնակցության ծրագիր) նախագիծ

## <u>Գործադիր ամփոփում</u>

### Նախադրյալներ

Los Angeles վարչաշրջանի Մետրոպոլիտենի փոխադրումների իշխանությունը (Metro) համարում է Los Angeles վարչաշրջանում բոլոր բնակվողներին, աշխատողներին և ճամփորդողներին գործակալության շահագրգիռ կողմեր: Բնակիչները, հիմնարկությունները, տեղային ձեռնարկությունները, համայնքային կազմակերպությունները, կրոնական առաջնորդները և նրանց ներկայացնող ընտրված պաշտոնյաները կարևոր դեր են խաղում հանրային մասնակցության ծրագրավորման և իրագեկման հարցում: Հանրության հետ կապն իրենից ներկայացնում է շարունակական ներգրավվում սպասարկման, ուղեվարձերի փոփոխության, ուսումնասիրությունների և նախաձեռնությունների, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրավորման փաստաթղթերի, շրջակա միջավայրի ուսումնասիրությունների, ծրագրի պլանավորման, կառուցման և տրանսպորտի անվտանգության մասին կրթության հարցերում:

Այս Public Participation Plan-ը (Plan) ստեղծվել է, որպեսզի գրանցի գործակալության հանձնառության մեթոդները, նորարարությունները և չափումները՝ հասնելու և գերազանցելու ԱՄՆ Տրանսպորտի նախարարության (U.S. Department of Transportation, USDOT) կողմից նշանակված պահանջները, ներառյալ՝ Դաշնային տարանցման վարչության (Federal Transit Administration, FTA) C 4702.1B շրջաբերականները, որոնք նշում են ստացողների պարտականություններն անգլերեն լեզվի սահմանափակ գիտելիքներ ունեցող մարդկանց հանդեպ, FTA C 4703.1 շրջաբերականը, որն ուղղորդում է ստացողներին ինտեգրել Շրջակա միջավայրի արդարության դրույթները տրանսպորտի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացին, ինչպես նաև Մայրուղիների դաշնային վարչության (Federal Highway Administration, FHWA) Title VI (Գլուխ VI) ծրագիրը: Plan-ը նաև համապատասխանում է 1964թ. Civil Rights Act-ի (Քաղաքացիական իրավունքների մասին օրենք) Title VI-ին (խտրականության բացառման կանոնակարգեր), 1973թ. Federal-Aid Highway Act-ի (Մայրուղիների դաշնային օգնության մասին օրենք) մաս 162(a)-ին և 1975թ. Age Discrimination Act-ին (Տարիքային խտրականության մասին օրենք):

### Ընդհանուր բնութագիր

Յուրաքանչյուր երեք տարին մեկ Metro-ն թարմացնում է Public Participation Plan-ը՝ համաձայն վերոնշյալ պահանջների: 2016թ.-ից ի վեր հետևյալ վերանայումներն են կատարվել 2019 Plan-ի նախագծում՝

- Ներառվել է Metro-ի Արդարության պլատֆորմի ծրագիր, որը հաստատվել է Metro-ի Տնօրենների խորհրդի կողմից 2018թ. մարտին:
- Կառուցվածքային փոփոխություններ են կատարվել Metro-ի Հանրության հետ կապերի բաժնում:
- Թարմացվել են գործի ուսումնասիրությունները, որոնք արտացոլում են Metro-ի հանձնառությունը հանրությանը հասնելու ավանդական իրազեկման մեթոդներից բացի այլ միջոցներով:

Այս Plan-ի նպատակն է ստանալ հանրության կարծիքը՝ համոզվելու համար, որ մենք անում ենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի տեղեկացնենք հանրությանը մեր նախագծերի, ծրագրերի և նախաձեռնությունների մասին: Հանրության մեկնաբանությունների շրջանը բաց է 2019թ. մարտի 6-ից, չորեքշաբթի, մինչև 2019թ. ապրիլի 12-ը, ուրբաթ: Հանրության մեկնաբանությունների շրջանի ավարտից հետո Metro-ի անձնակազմը կուսումնասիրի մեկնաբանությունները և կթարմացնի Plan-ը՝ հիմնվելով որևէ նոր իրազեկման գործիքների վրա, որոնք, մեր կարծիքով, կարող են սատարել նշանակված պահանջները գերազանցող միջոցներ ձեռնարկելու մեր հանձնառությունը: 2019թ. աշնանը Metro-ի անձնակազմը կներկայացնի իր վերջնական փաստաթուղթը Metro-ի Տնօրենների խորհրդին՝ վերջնական վերանայման և հաստատման համար:

Plan-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [metro.net/communityrelations](metro.net/communityrelations) կայքը

**Հանրության մեկնաբանություններ**

Հանրության մեկնաբանությունները կարող են ուղարկվել այսպես՝

**Մեկնաբանությունների առցանց ձև՝** metro.net/communityrelations

**Էլ. նամակով՝** [communityrelations@metro.net](mailto:communityrelations@metro.net)

**Փոստով հետևյալ հասցեին՝** LA County Metropolitan Transportation Authority

Community Relations
Attn: Michael Cortez
One Gateway Plaza, M/S 99-13-1
Los Angeles, CA 90012

**Ներկայացումներ**

**Մարտի 6, ժամը 11am-ին**
Metro-ի Տեխնիկական խորհրդատվական կոմիտե
Metro-ի կենտրոնական գրասենյակ, Mulholland կոնֆերանս դահլիճ
One Gateway Plaza
Los Angeles, CA 90012

**Մարտի 6, ժամը 6:30pm-ին**
San Fernando Valley-ի Սպասարկման խորհուրդ
Marvin Braude Constituent Center
6262 Van Nuys Blvd,
Van Nuys, CA 91401

**Մարտի 8, ժամը 9:30am-ին**
South Bay Cities Սպասարկման խորհուրդ
Inglewood քաղաքապետարան
One Manchester Blvd
Inglewood, CA 90301

**Մարտի 11, ժամը 5pm-ին**
San Gabriel Valley Սպասարկման խորհուրդ
Metro-ի բաժանմունքի 9 շենք, El Monte կայարան
3-րդ հարկ, Սպասարկման խորհրդի սենյակ
3449 Santa Anita Ave
El Monte, CA 90031

**Մարտի 13, ժամը 5pm-ին**
Westside/Central Սպասարկման խորհուրդ
Metro-ի կենտրոնական գրասենյակ, ժողովների դահլիճ
One Gateway Plaza
Los Angeles, CA 90012

**Մարտի 14, ժամը 10:30am-ին**
Հասանելիության խորհրդատվական կոմիտե
Metro-ի կենտրոնական գրասենյակ, Union Station կոնֆերանս դահլիճ
One Gateway Plaza
Los Angeles, CA 90012

**Մարտի 14, ժամը 2pm-ին**
Gateway Cities Սպասարկման խորհուրդ
Salt Lake հանգստյան կենտրոն
3401 E. Florence Ave
Huntington Park, CA 90255

**Մարտի 27, ժամը 6pm-ին**
Քաղաքացիների խորհրդատվական կոմիտե
Metro-ի կենտրոնական գրասենյակ, Union Station կոնֆերանս դահլիճ
One Gateway Plaza
Los Angeles, CA 90012

**Մարտի 28, ժամը 6:30pm-ին**
Crenshaw LAX նախագծի նորություններ
Inglewood քաղաքապետարան
1 W Manchester Bl
Inglewood, CA, 90301